

աշտարակներով, ամրութիւններով և դուռներովն, ինչպէս նաև անոր դասասանի դրան սեաւը: Քրիստոսի 70 թուականին էր որ քաղաքի պաշարման ժամանակ Տիտոս քանդեց այդ պարիսպը և ամրութիւնները: Յովսեպոսի յիշատակութիւնը Յիսուսի խաչելութենէն հազիւ 37 տարի վերջն է, և կրնամք համոզուիլ թէ դատաստանի դրան սեամբ ըսուածը Խաչի ճանապարհի ծայրը կը գտնուէր. մեր Տէրն Յիսուս՝ Խաչը ուսին վրայ կ'անցնէր այդ դուռնէն — քրիստոնէական նախադրուէքի արեւելեան մասը — և կը տարուէր Գողգոթա, քաղաքէն դուրս ուր պիտի կատարուէր իր խաչելութիւնը. ուստի այս գտնուած աւերակները անգամ մը եւս կ'ապացուցանեն թէ Գողգոթան եւ Քրիստոսի Ս. Գերեզմանը իրապէս կը գտնուին իրենց իսկական տեղերը. այդ տեսակէտով եւս գտնուած յիշատակարանները կը ներկայացնեն մեծ արժէք մը:

Ուրեմն Յիսուս, երրայական օրինաց համաձայն, քաղաքէն դուրս խաչուեցաւ: Նոր կտակարանն ալ կը հաստատէ զայդ. «զի մօտ էր ի քաղաք անոր տեղին՝ ուր խաչուեցան Յիսուս» (Յովն. ԺԹ. 20). «Վասն որոյ և Յիսուս, զի սրբեսցէ իւրով արեամբն զժողովուրդն, արտաքոյ դրանն չարչարեցաւ» (Եբր. ԺԳ. 12): Գողգոթային և Ս. Գերեզմանին պարսպէն դուրս ըլլալուն մէկ ապացոյցն ալ Բրօֆ. Schickի Խպտոց վանքին մէջ վերջերս գտած վաղեմի գերեզմանի մը գոյութիւնն է. յիշեալ վանքը Ս. Յարութեան Տաճարին գրեթէ յարակից է և նոր գտնուած պարսպին մէկ մասն ալ կը գտնուի նոյն վանքը հրթալու ճանապարհին մօտ: Մինք ալ անձամբ տեսանք այս աւերակները, պարսպի մասերը, սիւները՝ իրենց կարնթական խոյակներով, և դատաստանի դրան սեամբ՝ որուն քարայտակը անցուդարձէն մաշած ու խորացած էր. եզրակացնելով այս տողերը, ըսենք որ՝ Ս. Յարութեան Տաճարի մօտիկ Ռուսաց վերեւ յիշուած հաստատութեան արեւելքը, ճանապարհին վրայ կար երրայական կրկնակ պարիսպը, ըստ Յովսեպոսի, որուն կործանուած աւերակներուն վրայ էր որ կոստանդիանոս կայսր շինել տուած էր Ս. Յարութեան աննման տաճարին սիւնազարդ և գեղեցկաշէն բացօթեայ նախադրուէքը: